Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թվականի
ապրիլի 17 -ի N 194 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Իրականացնել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքի անապահով ընտանիքների համար բնակարանների ձեռքբերում» բարեգործական ծրագրի շրջանակներում ք. Վանաձոր, «Տարոն-2» ՔՇՀ-3 թաղամասի, 76 շենքի, բն. 9 հասցեում Վարդան Կոծինյանի ընտանիքի համար ձեռք բերված բնակարանի վերանորոգման և կահավորման աշխատանքները
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերարներ (իրավաբանական և ֆիզիկական անձինք)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26, ՀՎՀՀ՝ 02507456
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաք, սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 4.167.975,00 դրամ, որից բնակարանի վերանորոգում՝ 1.844.325,00 դրամ, կահավորում՝ 2.323.650,00 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Վարդան Կոծինյանի անապահով ընտանիք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019 թվականի մայիսի 6-ից մինչև հունիսի 28-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2019 թ. մայիսի 6-ից մինչև հունիսի 28-ն ընկած ժամանակահատվածում նախատեսվում է վերանորոգել և կահավորել բնակարանը. արժեքը՝ 4.167.975,00 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է բնակարանի վերանորոգման և կահավորման աշխատանքների իրականացում՝ 4.167.975,00 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում

	կազմակերպական ծախսերը	
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Վանաձորի քաղաքապետարանի հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ